



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate



Թի 1755  
Ապրիլ 21, 1994

Հոգեշնորհ  
Տ. Ծնորհք Ծ. Վրդ. Գասպարեան  
Հովի Ա. Ժողակաթ Եկեղեցոյ  
Նախագահ Ծխական Խորհուրդի  
Պէլվիլ.

Միրելի Հայր Ծնորհք,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները: Համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 13, 1994-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի չորս անդամներ:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Միզըն Գրէյմըր  
Ծան Պակտասարեան  
Ծորճ Մարիֆեան  
Ալըն Մակարեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք հետեւեալները եւ կը թելադրենք որ կատարուին անհրաժեշտ սրբագրութիւնները. Ծխական Խորհուրդի հաշուական տեղեկագիրը ամբողջական չէ: Ելեւմտական հաշիւներու գումարները չեն համապատասխաներ Ծխական Ժողովին ներկայացուած հաշիւներուն: Տարեկան տեղեկագիրը ստորագրուած չէ ոչ Հոգեւոր Հովիւին եւ ոչ ալ Հաշուեքննիչ Յանձնախումբի Ատենապետին կողմէ: Համայնքը բաւարար պահեստի գումար ունի իր տուրքը վճարելու համար. կը հաճի՞ք բացատրել թէ ինչու ծրագրուած է 1994-ի տուրքը չվճարել: Ծխական Ժողովին ներկայուած տեղեկագիրը Ծխական Խորհուրդին կողմէ պէտք է ըլլայ եւ ոչ թէ Ատենապետին: Զեռագիրով պատրաստուած ատենագրութիւնը որեւէ ստորագրութիւն չի կրեր: Առաջնորդարան դրկուած չէ օրինակը քուէաթուղթին, ուր արձանագրուած ըլլան թեկնածուներուն անունները եւ անոնց ստացած քուէները:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:


Միրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐԲ. ՊԱՐՍԱՄԵԱՆ  
Առաջնորդ

# Holy Shoghagat

ARMENIAN APOSTOLIC CHURCH

400 HUNTWOOD ROAD + BELLEVILLE, ILLINOIS 62221 + 618-277-6400



VERY REV. SHNORK KASPARIAN

Մայիս 2, 1994

Բարձրաշնորհ  
Տ. Խաթակ Արք. Պարսամեան  
Բարեխնամ Առաջնորդ Հայոց  
Ամերիկայի Արեւելեան Թեմին,  
Նիւ Եորք.

Գերաշնորհ Արքազան Հայր,

Մնորհակալութեամբ ստացած ենք Ձեր Ապրիլ 21, 1994 թուակիր նամակը որով կը վաւերացնէիք մեր Միական Խորհուրդի նորընտիր անդամները: Այժմ, սոյն գրութեամբ կուգամ տեղեկացնելու Ձերդ Արքազնութեան յիշեալ նորընտիր Միական Խորհուրդի Գիւանի կազմը որ կը բաղկանայ հետեւեալներէ:

Հրանդ Նորսիկեան, Ատենապետ.  
Տէլիտ Մաթոսեան, Փոխ Ատենապետ  
Սիւզան Գրէյմըր, Քարտուղար  
Ճան Պակտասարեան, Գանձապահ

Խորհրդականներ, ձէյն Մաթոսեան,  
Մարլօթ Թաթոսեան, Ճօրճ Մարիմեան,  
Ալբըն Մակարեան.

Վերոյիշեալ անդամներուն հասցեները արդէն տարեկան տեղեկագիրին մէջ տրուած են: Ձայս հաղորդելով Ձերդ Արքազնութեան ու խնդրելով Ձեր օրհնութիւնը, մնամ խորին յարգանքօք ի համբար Ձեր Ս.Աջին:

Մնորհք Ս. Վրդ. Գասպարեան  
Հոգեւոր Հովիւ



**DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA**  
**ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ**

Archbishop Khajag Barsamian, Primate

Թի 2107  
 Յունիս 20, 1995

Հոգեշնորհ  
 Տ. Ծնորդք Ծ. Վրդ. Գասպարեան  
 Հովի Ա. Շողակաթ Եկեղեցւոյ  
 Նախագահ Ծխական Խորհուրդի  
 Պէլվի.

Սիրելի Հայր Ծնորդք,

Վերջերս ստացանք համայնքիդ Անդամական Ժողովի լրացուցիչ տեղեկագիրները: Ձեր նամակին մէջ կը հաղորդէք թէ Փետրուար 12 եւ Փետրուար 26, 1995—ին գումարուած Անդամական Ժողովներու ընթացքին ընտրուած են Ծխական Խորհուրդի հինգ անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

- Տէյվիտ Մաթոնէսեան
- Ծէյն Մաթոնէսեան
- Տօրին Ներսէսեան
- Հրանդ Նորսիկեան Կրտ.
- Շարլոթ Թադոսեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ համայնքդ Առաջնորդարանին տակաւին պարտական է 1993—94 շրջանի տարետուրքերը:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթենք որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

*Khajag Barsamian*

ԽԱԺԱԿ ԱՐԹ. ՊԱՐՍԱՄԵԱՆ  
 Առաջնորդ



**DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA**  
**ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ**

**Archbishop Khajag Barsamian, Primate**

Թի 2303  
Մարտ 27, 1996

**Հոգեշնորհ**  
**S. Շնորհք Ծ. Վրդ. Գասպարեան**  
**Հովի Ա. Աստուածածին եւ Ա. Շողակաթ Եկեղեցոյ**  
**Նախագահ Ծխական Խորհուրդի**  
**Պէլվի.**

**Սիրելի Հայր Շնորհք,**

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 14, 1996 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 5, 1996-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի չորս անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

- Շան Պաղտասարեան**
- Ժինա Նուպարեան Բերնան**
- Շորճ Մարիֆեան**
- Ալէն Մակարեան**

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք հետեւեալները. Ծխական Խորհուրդի ներկայացուցած տեղեկագիրը պէտք է ստորագրուի թէ ատենապետին եւ թէ ատենադպիրին կողմէ, իսկ Անդամական Ժողովի ատենագրութիւնը՝ Հովիին, Ժողովի ատենապետին եւ ատենադպիրին կողմէ: Բարի եղէք առաջին առիթով ստորագրուած օրինակները ղրկել Առաջնորդարանը: Ինչպէս նաեւ, 1993-95 տարիներու համայնքիդ ծխական տարետուրքերը (9,806 տոլար) չեն վճարուած:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթենք որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

**ԽԱԺԱԿ ԱՐԹ. ՊԱՐՍԱՄԵԱՆ**  
**Առաջնորդ**